ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

01 ԱՊՐԻԼԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Սամվել Գրիգորյանը, Աղվան Հարությունյանը, Վարդան Սամսոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Մարոզ Սարիբեկյան, Միհրան Մելքումյան, Պապին Վարդանյան, Սեդրակ Սաֆարյան, Հասմիկ Մելքումյան, Լուսինե Զոբանյան, Ռաֆֆի Գասպարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի օգնական՝ Մարոզ Սարիբեկյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 01-Ի ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍՐՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 17-րդ հոդվածի,համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 01-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը

1.Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման 2021 թվականի փաստաթղթերի հաստատման մասին
2.Համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3.Ակուն համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարելու և օգտագործման տրամադրելու մասին
4.Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
5.Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից
Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼՈՒՍԻՆԵ ՁՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, համայնքի ավագանին *որոշում է* '

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Ակունք համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 71-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ն/

Լսեցին
ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները,ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ակունք համայնքի սեփականության (ակտիվների և պարտավորությունների) 2021 թվականի պարտադիր գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն N 1-24 հավելվածների:

2. Սույն որոշմանը կցվում է Ակունք համայնքի ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը, որում արտացոլված են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Լ/

Լսեցին

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՍԻԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ, 67-րդ և76-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի,համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան՝ համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
   1)աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի,
   2)ուղղակի վաճառքով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 2-ի,
   2.Համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարել ինքնակամ շինությունը կառուցողին ուղղակի վաճառքով և ուղղակի վաճառքի գին սահմանել համաձայն հավելված 3-ի
   3.Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը տրամադրել վարձակալության իրավունքով՝մրցույթով համաձայն հավելված 4-ի :
   Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի ,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության2011թվականի դեկտեմբերի29-ի թիվ 1918-Ն որոշումը,Հայաստանի Հանրապետության վարչապետի2001 թվականի օգոստոսի 03-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» դրական եզրակացությունները, համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՀԵԿ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թվականի հունիսի 1-ի թիվ 186 -Ն հրամանը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հողամասը ճանաչել Ակունք համայնքի սեփականություն համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԵԽԱԿ ՄԵԽԱԿՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՈՍԿԱՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը